




95A

L.I.6







ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 1

15 Ապրիլ 1891



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՂԷԼԷԿԵԱՆ

1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՆԻՆ ԸՆԴ ԳԵՐՔՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ : — Պէտրոս վ. Գոյունեան :
2. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ (Հռովմայեցոց բարբէն կտոր մը) : — Յարութեան Ունեան :
3. ԳԻՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՐԳԻ ՆԻԹԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ : — (Շարայարութիւն եւ վերջ) : Յովհաննէս վ. Բալմիսեան :
4. ԿԱՐԴԻՆԱԼ ՄԱՆԻՆԿ ԵՒ ԱՆԳՂԻՈՅ ԱԶՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՆ : — Յ. վ. Բ.

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻԻ 1

45 Ապրիլ 1894

Յ Ա Ր Ա Բ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՆԻՆ ԸՆԴ ԳԵՐՔՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ

Ա. Հին փլյխտփայ մը տահմանած է ճշմարտութիւնը մտնի եւ նման հաւատարութիւն իրեն մտաց հետ» այս տահմանը որքան խորունկ է յիմաստս, այնքան բացայայտ է ի բանս, զոր հռչակաւոր Տը Մեաղրը կայծակ մի ճշմարտութեան կը կոչէ . որ ինքն իրեն ինչ ըլլալը կը յայտնէ, եւ յիրաւի մարդկային բանին նպատակն է իմանալ իրաց գոյութիւնը եւ բնութիւնը, այն գոյութիւնն եւ բնութիւնը զոր իրերը ունին յինքեանս՝ անկախ ըլլալով ի մեր մտաց, ապա թէ ոչ կ'ըլլային մեր մտաց արարածներն, եւ ոչ ճշմարտութիւն իրաց . ուստի եւ ամեն գիտութեան վախճանն է յայտնել թէ մեր մտաց բմբռնումը կը հասապատասխանէ իրաց :

Կրնանք ուրեմն իրաւամբ հատատել թէ ճշմարտութեան սէրը՝ բնական ձիրք մի է բանականութեան, եւ նոյնը կը մղէ եւս ամեն բանասէր յիւր խորհուրդս եւ յուսմունս :

Բայց գիտական կարգի մէջ միեւնոյն միջոցով որ է բանականութիւն, միեւնոյն վախճանաւ՝ որ է ճշմարտութիւն, կը հասնին միշտ ուսումնասէր անձինք միեւնոյն հետեւութեանց : Թէպէտեւ իրողութիւնը մարդկային բանականութեան սպտիւ չբերեր, սակայն խոստովանելու ենք թէ բոլորովին հակառակը

կը պատահի մատուորական խուզարկութեանց մէջ . վամպի չըկայ ճշմարտութիւն մը որուն դէմ հակառակորդ մը եղած չըլլայ, եւ չկայ անտեղի մողորութիւն մը որ իւր պաշտպանն եւ ջատագոյն գտած չըլլայ բանասիրաց գասուն մէջ : Այս բանիս պատճառը գտնելու համար շտա հետուն երթալ հարկ չէ . մեր բանաւորական կարողութեան տկարութիւնէն, եւ մարդկային մըտաց զօրութեան սահմանափակ ըլլալէն է որ մեր ճանաչողութիւնը միշտ իրաց չհամապատասխաներ : Երբոր իւր կ'ըմբռնենք ոչ որպէս է յինքեան, այն ատեն ճշմարիտ ճամբէն կը մղորդինք . երբոր շիտ ինն եզանակաւ , աւելի կամ պակաս կ'ըմբռնենք , մեր ճանաչողութիւնն անկատար կ'ըլլայ , խի անոնք որ գիտնական կարգի մէջ կ'ստանան կատարեալ ճանաչողութիւն եւ գիտութիւն իրաց՝ կը կոչուին յիրաւի ճշմարիտ խմաստունք :

Անտարակոյս Բաճն է մարդու համար բնական կերպով ըսկիղբն եւ միջոց համեղու այն ճշմարտութեանց, որոնք իւր կարողութեան սահմանին մէջ են : Բայց հոս շատ կարեւոր խնդիր մը կը ծագի , այսինքն այս բնական սկիղբէն եւ միջոցէն զատ կարելի է մարդու համար Գերբնական սկիղբն եւ միջոց մ'ալ , որով կարենայ ճանչնալ թէ՛ բնական եւ թէ՛ գերբնական կարգի ճշմարտութիւններ :

Բ. Շիտթութեանց տեղի չտալու համար ինչ ինչ նախադասութիւններ գնել հոս հարկ կը համարիմ .

Ա. Բնական սկիղբն եւ միջոցը բնական կարգի ճշմարտութեանց համեղու համար՝ մարդկային բանն է :

Բ. Գերբնական սկիղբն եւ միջոց այն է՝ որով կը յայտնէ մեզ Աստուած ծանօթ կամ անծանօթ ճշմարտութիւն մը բնականէն վեր կերպով մը :

Գ. Բնական կարգի ճշմարտութիւն այն է զոր մարդ կրնայ իմանալ բանականութեան լուսովը , ուստի եւ անոր ճշմարտութեանը իր խելքը կը համի :

Դ. Գերբնական կարգի ճշմարտութիւնը մարդու մտաց կարողութենէն վեր է , ուստի եւ բանականութեան լուսով չենք կրնար անոր ճշմարտութեանը խելք հասցնել , եւ խելամուռ ըլլալ նախադասութեան ներքին կապակցութեանն , հետեւաբար եւ ոչ մերժել զայն , վամպի անհասանելի է մեզի համար :

Ե. Կայ բացարձակ անկարելիութիւն մը որ իրաց էութեանէն կախումն ունի , այնպէս որ բացարձակապէս անկարելին եթէ կարենար գոյութիւն ստանալ , միեւնոյն ժամանակ թէ՛

գոյութիւն պիտի ունենար , եւ թէ՛ պիտի չունենար . զոր օրինակ քառակուսի չըջանակ մը անկարելի է բացարձակապէս , որովհետեւ միեւնոյն ատեն թէ՛ չըջանակ պիտի ըլլար , եւ թէ՛ պիտի չըլլար , թէ՛ չորս անկիւն պիտի ունենար , եւ թէ՛ պիտի չունենար : Այս անկարելիութեան նոյն իսկ գաղափարը ներքին ընդդիմութիւն կը պարունակէ յինքեան . եւ երբ կ'ըսուի թէ Աստուած ամենազօր է , չիմացուիր թէ Աստուած կարող է ընդդիմական բաներ ընել , կամ փոխանակ ըսելու թէ Աստուած պանոնք չկրնար ընել , լաւ եւս Ագուխնացւոյն հետ կ'ըսենք թէ այդ բաներն չեն կրնար գոյութիւն ունենալ : Բանի մը բացարձակապէս անկարելիութիւնը հաստատելու համար , անոր անտեղի ըլլալուն ճիշդ գաղափար ունենալու եմք , ապա թէ ոչ մենք զմեզ փոսնդի մէջ կը ձգենք անտեղի ըսելու այն բանին որ անտեղի չէ :

Ձ. Կայ նաեւ ընական կարելիութիւն եւ անկարելիութիւն . անկարելի կը կոչուին ընականապէս այն բաները՝ որոնք բնութեան օրինաց համաձայն չեն . անկարելի է սր յօլս նստուած քար մը գետինը չկնայ , փոսն դի բնութեան օրէնքը այնպէս կը պահանջէ . Աստուած որ այն օրէնքը հաստատած է կրնայ զայն խախտել կամ ի կախ բռնել , զոր մարդս չէ կարող ընել : Ուստի այնպիսի իրերը բնականապէս անկարելի կ'ըսուին ոչ թէ Աստուծոյ համար , հապա մարդուս նկատմամբ :

Ե. Ներկայ խնդրու պնդափ կարեւոր չէ հաւատացելոց համար որոնք Աստուածային յայտնութեան ոչ թէ՛ միայն կարելիութիւնը այլ եւ անոր իրողութիւնը կ'ընդունին , եւ հաստատուն հաւատքով կը գաւանին՝ որչափ կարեւոր է անոնց համար որոնք նիւթակրօնից եւ բանապաշտից պատուն կը պատկանին , եւ որոնք ի յառաջագունէն կը մերժեն իբր բացարձակապէս անկարելի ս'ր եւ իցէ գերբնական սկիզբն եւ միջոցն ճշմարտութեան համնելու համար : Եւ այսու կը յայտնուի խնդրոյս կարեւորութիւնը այս բանատիրաց նկատմամբ , փոսնդի թէպէս մէկ կողմանէ գերբնական միջոցի մը լոկ կարելիութիւնը չբարեպետ անոր իրական գոյութիւնը ընդունելու , սակայն միւս կողմանէ ալ զայն ի յառաջագունէն եւ բացարձակապէս մերժելու իրաւունքը չտար . ուստի եւ ճշմարիտ բանասէրն չկրնար արհամարհել այս խնդրու , նա մանաւանդ եւ : պարտ յանձին ունի զայն քննել եւ ստուգել . մինչքեւ եթէ փիլիսոփայական քննութիւնն սպաջուցանէ անոր կարելիութիւնն՝ նոյն ընդ

նոյն կը ծայր պարտաւորութիւնն խուզարկելու թէ այդ յայտնութիւնն սր կարելի է, եղած է արդեօք . վասնզի եթէ իրողութիւնը յուշնէ թէ Աստուած խօսած է մարդուս , այդ վերջնական ճանաչողութիւնէն կրնան Աստուծոյ պատգամներ յայտնուիլ , եւ պարտաւորութիւններ յառաջ գալ . ուստի այդ յայտնութեանց նկատմամբ անտարբեր կերպով չկրնար վարուիլ բանաւոր արարածն :

Այս ծանօթութիւններէն յետոյ քննենք նախ նիւթապաշտից կարծիքը ներկայ ինչորոյս նկատմամբ :

Գ. Բանապաշտք՝ դիտութեանն եւ ճշմարտութեան զգալի փարը կ'ամփոփեն իրենց բանականութեան անձուկ սահմանին մէջ , այնպէս զի ինչ որ բնական մտաց լուսով երեւան կ'ելլայ եւ կ'ըմբանուի , այն ճշմարիտ է . եւ այս զգալի փարը կը հաստատեն իբր անսխալ սկզբունք մը ճշմարտութիւնը մղորտութեանն որոշելու , որով այս դասու փիլիսոփայք նիւթակրօնից հետ կը դաւանին սկիստականութիւն յիրա կրօնից , ի ճշմարտութիւնս՝ որ վերջնական եզանակատ յայտնուած ըլլան մարդկանց , բացարձակապէս եւ ի յառաջագունէն մերժելով վերջնական միջոցի մը նոյն խոկ կարելիութիւնը :

Ինչո՞ւ բանապաշտք այնչափ կը խուչին վերջնականէն . — իրենց պատճառներն զլիստորաբար երկուքի կրնան վերածուիլ . որոնց մին՝ ուղղակի կերպով վերջնական միջոցի մը անօգուտ ըլլալն եւ անպատշաճութիւնը յուշընելով , անուղղակի եղանակաւ նորին կարելիութիւնն ալ մերժելու կը զիտէ . իսկ միւսը՝ ուղղակի կերպով կը ջանայ ապացուցանել այդ վերջնական միջոցին անկարելիութիւնը մարդուս համար :

Առաջին պատճառ . Բնութեան հաստատ օրէնքը , որով աշխարհս կը կառավարուի , եւ որ կանոնաւոր եղանակաւ մեր զգացմանց ենթակայ եղած նիւթերու մէջ շարունակ կը տեսնուի՝ կ'ազդէ նիւթակրօնից եւ բանապաշտից այն ընդլիմութիւնը առ ամենայն ինչ որ ի վեր է քան զբնական կարգ եւ օրէնք իրաց . կը վախճան թէ որ ինչ իրաց բնական եւ հասարակ ընթացքէն դուրս կ'ելլայ , թէ եւ ամենադեղեցիկ եւ ամենալիստ , հարկ ըլլայ թուել ի շարս բանաստեղծական զիւտից , կը տարակուսին թէ չըլլան անոնք՝ ցնորք մարդկային մտաց , եւ ոչ ճշմարտութիւն իրաց , ուստի չենք ուղեր , կ'ըտեն , ճշմարտութիւնը բանաստեղծութեամբ փոխանակել :

Երկրորդ պատճառ . Ճշմարտութեան հասնելու համար

մարդկային մտաց լուսէն զատ ուրիշ գերբնական միջոց մը ընդունիլ՝ կապել ըսել է ընտանիքին կարողութիւնը , արդիւիկ նորին ազատ գործածութիւնը , որով եւ ջնջել բոլորովին . միթէ փիլիսոփայական հետազոտութիւնը պէտք չէ՞ որ ազատ ըլլայ կրօնական եւ գերբնական վարդապետութեանց անփոփոխ հաստատութենէն եւ որոշումէն . եթէ փիլիսոփայն պիտի ստիպուի ընդունելու զոր ինչ կրօնք գերբնական լուսով յայտնեն , թէ եւ հակառակ ըլլայ բանականութեան որոշողութեանց , առ ի՞նչ կրնար ծառայել այն բանականութիւն , որ ընտելեան տուած ամենամեծ սրբաբուն է մարդկութեան . ուստի կը հետեւեցնեն թէ յայտ փիլիսոփայի արժէք մը չկրնար ունենալ գերբնականն որ կը նուաստացնէ զմարդ , սչնչացնելով այն անդին ճիւղքը , որով ինքը կը տիրապետէ արարածոց վրայ , ուստի եւ բանականութիւնն մարդկային ընտելեան զծածէն զատ՝ ուրիշ սահման չընդունիր , կ'ըսեն :

Քննունք այս պատճառաց փիլիսոփայական արժէքը :

Դ. Բնութիւնը բացատրելու համար ի՞նչ հարկ կայ , կ'ըսեն վերոյիշեալ զատուց բանասէրք , զիմն առ արտաքոյ կարգի իրս : Պէտք չէ առանց հարկի բազմացուցանել զպատճառս : Արտաքոյ կարգի իրաց հաւատք չընծայելը միշտ խմատութեան նշանակ է արդեօք , տգիտութենէ ալ չի՞կրնար յառաջ գալ : Բասքալ շատ ճիշդ գիտողութեամբ կ'ըսէ թէ երկու դաս կայ տգիտաց , անոնք որ տղէտ են բարբոսի , եւ անոնք որ միայն կրնան տղէտ անուանիլ , որոնք խմատութեան ամենարարձր ատիճանը հասած ըլլալով յայտնի կը ճանչնան իրենց տգիտութիւնը : Այս ստացուածը կը պատշաճի նաեւ ներկայ ինդրոյս . ճշմարիտ խմատունք նոյն ընդ նոյն հաւատք չեն ընծայեր այն իրաց որ արտաքոյ կարգի կ'երեւին իրենց , բայց առանց ուրանալու անոնց կարելիութիւնը՝ տարակուսանաց ներքեւ կը զընեն զոյութիւնն , եւ ստէպ անոնց հաւատք ընծայելու հակամէտ կ'երեւնան . մէկ խօսքով՝ մերժելու ալ ըլլան , բանաւոր կերպով կը մերժեն : Երբոր մեծ գիտնականք բնական , մրտաւորական եւ բարոյական աշխարհի անդունդը մտնելու որ ըլլան՝ փոքրիկ կայծի մը լուսով տեսնուած ստուերին մէջ այնպիսի խորութիւն մը կը նկատեն որ հազիւ թէ բան մը կրնան գտնել , որուն համար համարձակին ըսել թէ այդ անկարելի է . այն հսնճարեղ անձինք չին փախնար ընդունել զայն որ է արտաքոյ կարգի , որովհետեւ ամենապարզ եւ հասարակ կարծուած

իրաց մէջ նաև կը գտնեն ժողովածոյ մը արտաքոյ կարգի իրաց :

Եւ յերաւի , անթիւ իրաց եւ եղելութեանց մէջ զորս անկարելի է բացատրել եթէ չգիմենք առ արտաքոյ կարգի իրս , բառական ըլլայ յիշել երկու իրողութիւն :

Նախ ենթադրենք թէ Աստուած խօսած չըլլար մարդկանց , եւ հետեւաբար մարդկային աղզին ընդհանուր աւանդութիւնները բնական կերպով ուղենք բացատրել , այսինքն ոմանց ցնորք կամ պատրանք ըսենք , այլոց նախատեսութիւն օրէնսդրաց կամ ընկերային սկսոյք ըսենք , եւայլն եւայլն , այս է պարզ եւ հասարակ եղանակ տեսութեան . բայց այս մեկնութեան արմատն ալ եթէ գննելու ըլլանք , շատ արտաքոյ կարգի բան մը կը գըտնենք : Կը հարցնենք այն փիլիսոփայից որ մեկնեն մեզ , եթէ կարող են , թէ « խօսին ո՞վ սորվեցուց մարդկանց » . յայտ մասին յայտնի են բանադիտաց համոզմունք թէ անկարելի է որ մարդիկ իրենք իրենցմէ խօսին հնարած ըլլան , եւ առ այս եղած փորձերն ալ հաստատած են այս համոզմունքը : Արդ՝ պարզու մի է այս զոր ընդունած ենք . — յուսմէ՞ . — անկարելի է որ զայն ստացած ըլլանք մեր շուրջը գտնուող անբան արարածներէն . անհրաժեշտ պէտք է ուրեմն գիմենք հազորդակցութեան մարդու բարձրագոյն դասու էակի մը հետ :

Երկրորդ . ուսկի՞ց է մարդու սկիզբը : — Եթէ Մովսիսի պատմութիւնը ընդունինք , կը փարատի խաւարն , եւ դժուարութիւն մը չենք : զգար հաստատելու թէ Արարիչն որ ի սկզբբան արարչութեան խօսած եւ հրահանուած է զմարդն , դարձեալ եւ ստեղ ստեղ կ'ուսուցանէ : եւ կը խօսի անոր հետ , բայց հակառակորդաց ենթադրութեան մէջ հարկ չէ՞ զիմեզ արտաքոյ կարգի բանի մը : Ծննդոց գրքին պատմութիւնը չընդունողներուն կը հարցնենք , ուստի՞ յառաջ եկած է մարդու սկիզբը : — Երկրէս , — կը պատասխանեն . — յանկարծակի եւ դանակաւ արդեօք . սակայն սակից աւելի արտաքոյ կարգի բան մը երեւակայից կարելի չէ : Բայց ո՞չ . մարդս , կըսեն , աճմանէ մը յառաջ եկած է , յաջորդաբար եւ աստիճանաբար կենդանեաց մէկ տեսակէն միւս աւելի զերազանց եւ կատարելա-

տեսակի մը անցնելով : — Միթէ արտաքոյ կարգին կը աճ մէջստեղէն այս մեկնութեամբ , որով Պոսուէի , Նիւտոնու Լէյպնիցի նախորդները նշանաւոր կապիկներ եղած պիւլլային , եւ այս անասուններն ալ նմանապէս երկրային սո-

զուններէ եւ կամ ջրային ճճիներէ յառաջ եկած պիտի ըլլային: Այս մեկնութիւնը կը համապատասխանէ՞ արդեօք բնութեան կանոնաց եւ ընթացից , մինչդեռ կը տեսնենք թէ նոյնատեսակ էակներ կրնան յիրաւի կատարեղագործուիլ , բայց միշտ իրենց տեսակին մէջ մնալով . ինչպէս Ամբրիկայի կամ Ափրիկէի վայրերնի ժողովուրդները քաղաքակրթութեամբ կրնան ժամանակաւ ընտելանալ , եւ քաղաքավարեալ ժողովուրդ մը դառնալ , բայց ոչ երբէք մարդակերպ կապիկը (Orang—Outang) բանաւոր արարածի դառնալ , եւ նիւթակրօնից բոլոր ջանքերն ի դուր ելած են , երբ փորձած են ցուցնել թէ մի տեսակ արարած միւս տեսակի փոխուած ըլլայ . իրենք ալ կը խոտտոլանին թէ իրենց փորձերն ասպարիւն մնացած են յայտ մասին : Դիւրագոյն եւ ճշմարտագոյն է արտաքոյ կարգի արդիւնքն արտաքոյ կարգի միջոցի եւ պատճառի վերընծայել , քան թէ արտաքոյ կարգի իր մը բնական պատճառաւ մեկնելու ջանալ : Վառնդի ինչպէս անկարելի է որ արդիւնք մը առանց պատճառի յառաջ գայ , նոյնպէս ալ անհնարին է որ արդասիքը համեմատութիւն չունենայ իւր պատճառին հետ : Ուստի յայտնի կ'երևի թէ անբաւական եւ անտեղի է նիւթակրօնից առած այս մեկնութիւնը : Այս ուրեմն բնութիւնն հետազօտելով պարզ եւ հասարակ իրաց քողին ներքեւ արտաքոյ կարգի պատճառ մը ճանչնալով կը ստիպուինք , եւ յիրաւի ալ ամեն հանճարեղ անձինք կրօնական դադարարի աէր եղած են : Ուստի հաւատք ընծային առ արդոյ հարգին եւ առ գերբնականն՝ չէ թէ միայն բանաստեղծական զիւտ համարելու չէ , այլ եւ ըստ ամենայնի կը համապատասխանէ ճշմարտութեան իրաց :

Բնութեան զազանիքը ուրանալ անկարելի է :

Ե . Բայց բանապաշտք ուղղակի ալ կը ջանան սպացուցանել գերբնական միջոցի մը բացարձակ անկարելիութիւնը , որովհետեւ անիկայ բնական միջոցը պիտի ոչնչացընէր , կ'ըսեն , վերցնելով անոր ազատութիւնն , եւ արդիւնքով նորին գործածութիւնն :

Բանապաշտից պատճառաբանութիւնն թէպէտ եւ ճշմարիտ կէտեր ալ ունենայ , սակայն ստիւտասական սպառանք կը պարունակէ , զոր երևան հանելու համար մի առ մի քննենք իրենց պատճառաբանութիւնն . եւ որովհետեւ նոյն փիլիսոփայք ճշմարիտը գտնելու պաշտօնը միայն բանականութեան կը յատկացնեն , քննենք բարեմն մարդկային բանականութեան պաշ-

տօնն , կարողութիւնը եւ սահմանը : Նախ եւ առաջ հաստատելով որ թէպէտեւ բանականութեան լուսով բաղմամբիւ եւ մեծամեծ ճշմարտութիւններ կրնանք գտնել թէ՛ բնական , թէ՛ բարոյական եւ թէ՛ մտաւորական կարգին մէջ , այսու ամենայնիւ պէտք չէ երբէք մոռնանք թէ այդ կարողութիւնն սահմանափակ է , սպա թէ ոչ ծագու արժանի կ'ըլլայինք ենթադրելով որ չգտնուին ճշմարտութիւնք ի վեր քան զկար մարդոյ , մինչդեռ նոյն իսկ մեր շուրջը եղող ամենապարզ առարկայից քիչ մը խորին գննութիւնը նոյն ընդ նոյն կը ստիպէ զմեզ ճանչնալ մեր անկարողութիւնը : Եւ ներկայ նիւթիս նկատմամբ բաւական է մեզ հաստատել թէ բանասէրն չկրնար ընդունիլ իբր ուղիղ այն սկզբունքը որ կ'ըսէ « որ ինչ ի վեր է քան զբանականութիւն մարդոյ , ընդդէմ է բանականութեան » : Եւ յիշուի իրաց ճշմարտութիւնը , արարածոց էութիւնը եւ գոյութիւնը անկախ են մեր մտքէն , եւ մարդկային բանն սահմանափակ է , ուրեմն կրնան գտնուիլ , կան եւս շատ ճշմարտութիւններ , որոնք Արարչին ծանօթ եւ մեզ անծանօթ են , եւ զորս անկարելի է որ մենք մեր բանականութեան զօրութեամբ կամենանք իմանալ եւ հասկնալ :

Հիմա կրնանք որոշել թէ ի՞նչ է բանականութեան պաշտօնը : Բանականութեան պաշտօնն է՝ միտուել ճշմարտը , զայն յայտնել եւ պաշտպանել . միթէ ունի՞ նաեւ ճշմարտը մերժելու իրաւունքը , եւ անոր հակառակելու՝ եթէ իրեն ծանօթանայ ուրիշ միջոցաւ մը : Եթէ եղելութիւնք եւ գէպք բացարձակ ցուցնեն իրի մը ստուգութիւնը , զորօրինակ մեռուալի մը յարութիւնը , մարգարէութիւնք եւ անոնց ճշգրիտ կատարումն . բանականութիւնն ունի՞ արդեօք իրաւունք զայնա մերժելու այսու պատճառաւ միայն թէ կարելի չէ գտնուիլ բացատրել ընտանի եղանակաւ , եւ թէ ի վեր են քան զօրէնս ընտելեան : Տրամաբանօրէն բանական արարածն ոչ կրրէք կրնայ մերժել ճշմարտն , նա մտնուանց պարտ յանձինն ունի զայն ընդունելու կրք եւ ինչ եղանակաւ որ իրեն ծանօթանայ . սպա թէ ոչ իրաւունք պիտի ունենար նաեւ մերժելու արեղական էութիւնը , որուն ընտելեանը չճանչնար , թէպէտեւ գոյութիւնը կըզգայ , եւ անոր բարեբեր արդեանցմէ՛ շարունակ կ'օգտուի :

Բայց բանապաշտից դժուարութիւնն սակաւին իւր բոլոր ոյժը կուսենար եթէ գերբնականն արդիւրեւ ըլլար բնական միջոցի գործածութիւնը : Բայց չկայ այնպիսի արդիւրք , նա մանա-

ւանդ գերբնական միջոցով յայտնուած ճշմարտութիւնն ալ բրնականին օժանդակութիւնն եւ գործածութիւնը կը պահանջէ , մինչդեռ Աստուած ճշմարտութիւնը բանաւոր արարածի պիտի յայտնէ , եւ ի՞նչ արդելք կրնայ ըլլալ բանականութեան կողմանէ զայն ընդունելու , ինչպէս կ'ընդունի իբր ճշմարիտ իւր նրմաններէն աւանդուած այն գէպքերն , որոնց ստուգութեան վրայ տարակոյս չկրնար ունենալ , երբ պատմչայ գիտութիւնն եւ ճրչմարտախօսութիւնն բացայայտ ճանչցուին : Նմանապէս չունին իրաւունք բանապաշտք ի յառաջագունէն մերժելու գերբնական ճշմարտութեան կարելիութիւնը : Այդպիսի ճշմարտութեան հաւատք չընծայելէն առաջ թո՛ղ քննեն իրենք իրողութիւնն եւ գէպքն , որոնց հաւատալիութեան պատճառներն երբ ապացուցուին , կ'ստիպին բանաւոր արարածն զայնս ընդունելու , մինչդեռ ամենազէտ եւ ամենասուրբ է յայտնողն , որ ոչ կրնայ խաբել եւ ոչ խաբուիլ :

Բայց տակաւին կը պնդեն բանապաշտք ըսելով թէ խորհելոյ ազատութիւնը սեղմել , նոյն է իբր թէ թռչնոց մը թեւերը կտրելով՝ անոր յօս պերանալը խնդրել : — Բայց մարդկային բանականութեան եւ խորհելոյ ազատութիւն ըսելով ի՞նչ կիմանան , միթէ ճշմարտութեան տեղը մոլորութիւնը ընդգրկել , ստուերն փոխանակ իրի՞ն ըմբռնել , փոխանակ եղելութեան իւրաց՝ մտաց բանդագուշանքն ընդունելն կը հասկնան . այս ազատութեամբ միթէ կոյրն ալ կարող չպիտի ըլլայ արեգական լոյսը մերժելու , որովհետեւ ինքը զայն չտեսներ , եւ եթէ մերժէ , միթէ այսու արեգակը իւր լոյսը ծագելէն կը գաղբի : Մենք չենք ուզեր մերժել քննելու ազատութիւնը իբր միջոց մը ճրչմարիտն գտնելու եւ վախճանին համնելու ընտանի եղանակաւ , բայց ոչ երբեք մոլորութիւնը ճշմարտին տեղ ընդունելու : Եթէ միջոցն կը պահանջէ զազատութիւն , վախճանն անհրաժեշտ կը պահանջէ զսէր ճշմարտութեան եւ զճշմարիտն : — Արդ անկարելի է այդ ազատութիւն , կ'ըսեն բանապաշտք , վանդի անփոփոխ է հաստատութիւնն գերբնական վարդապետութեանց , որք թէպէտ հակառակ եւս ըլլան մտաց որոշողութեանը , սակայն պիտի պահանջեն զհաւատս , ուստի կամ պէտք է հրաժարիլ մարդկային բանին գործածութիւնէն , կամ գերբնական միջոցն մերժել բոլորովին : —

Բայց աստ մեր ի յառաջագունէն ընդհանուր ճշմարտութիւն կրնանք հաստատել , զոր ոչ ոք կրնայ մերժել , եւ է այս

Թէ՛ ճշմարտութիւն մը ճշմարտութեան կրնար չհակառակիլ .
ենթացրելով որ Աստուածային յայտնութիւնք եղած ըլլան , չէ՛
կարելի որ հակառակին ուղիղ բանին , որովհետեւ միեւնոյն է
սկիզբն , պատճառ եւ պարզութիւն , որ է Աստուած , Թէ՛ բնական
լուսոյն եւ Թէ՛ գերբնականին , ուրեմն յայտնեալ ճշմարտու-
թիւնք կամ ի վեր պիտի ըլլան մարդուն մտքէն , ուստի եւ
մարդս չպիտի կարենայ անոնց խելք հասցնել , եւ կամ մար-
դուս մտաց կարողութեան սահմանին մէջ պիտի գտնուին , եւ
չպիտի կարենան հակառակիլ բանականութեան : Եւ յիշուի ալ
բանապաշարք բոլոր իրենց մտաց ոյժն ու ճիւղը թափած են ու
չնշայնելու այն ճշմարտութիւններն , զորս ունի քրիստոնէու-
թիւնն յայտնութեամբ ստացած յԱստուծոյ , եւ յաջողած չեն
կրէ՛ք սարացուցանել անոնց հակառակին բանականութեան , այլ
իրենց պատճառներն այս միայն յուսած են՝ այսինքն այն ճըշ-
մարտութիւններէն տմանց մարդուս մտքէն վեր ըլլալն , զոր եւ
քրիստոնէաց փիլիսոփայք կը հատուտեն եւ կը պաշտպանեն :

Ուրեմն փոխանակ ըսելու Թէ՛ գերբնական միջոցն անօգուտ
պիտի ընէր զբնական լոյս մտաց՝ կրնանք հետեւեցնել ամենայն
իրաւամբ Թէ՛ անով բանականութիւնն եւս առուել նպատու պի-
տի ունենայ , մինչդեռ եթէ՛ յայտնեալ ճշմարտութիւնք չեն ի
վեր քան զկար մարդոյ՝ մարդկային բանին հետադասութիւնն
իւր հատուտութիւնք կը գտնէ , իսկ եթէ՛ ի վեր են քան զկար
մտաց՝ երբ կը գազրի բանականութեան կարողութիւնք , կը
սկսի գերբնականն , ուղղելով զմեզ ի ճանաչումն ճշմարտու-
թեանց , զորս բնական եղանակաւ չպիտի կարենայինք ճանչնալ :
Եւ դայս՝ ամենամեծ բարիք համարելու չէ՞ Աստուծոյ կողմա-
նէ , որ այդ յայտնութեամբ բաւական կ'ընէ զմեզ իմանալ այն
ճշմարտութիւնները , որոնց էութեանք Թէ՛ պէտեւ չենք կրնար
խելք հասցնել , անոնց դոյութիւնք կը ճանչնանք ստոյգ եղա-
նակաւ :

Չ. Թէ՛ պէտ եւ բանապաշարից դժուարութիւններն հերքելով
հատուտայինք ըստ բաւականի գերբնական միջոցին կարելիու-
թիւնք , սակայն հիմա ուղղակի կ'ըստով ալ համառօտենք զայն:
Գերբնական յայտնութեան կարելիութիւնն հատուտելու
համար երեք կէտ նկատելու եմք . Յայտնուի՞ որ է Աստուած ,
մարդն՝ որու մ յայտնութիւնն կ'ըլլայ , եւ ճշմարտութիւնն՝ որ կը
յայտնուի : Ետև չիայ անկարելիութիւն մը յայտնողին կողմա-
նէ . ո՞վ պիտի յանդէսի մերժելու Արարչին ազատութիւնք , ու

րով չկարենայ խօսիլ իւր արարածոց հետ : Երկրորդ՝ մարդուն կողմանէ ալ արդեւք մը չկայ , մանաւանդ թէ շատ պատշաճութիւն ալ կը տեսնուի . վասնզի մարդս ի բնէ այնպէս հաստատուած է ոչ շատ բան իւր նմաններէն կը սորվի . ինչո՞ւ ուրեմն Աստուծո՞ւ ալ չպիտի կարենայ սորվիլ . եւ ջրտուի թէ մարդս չկրնար ըմբռնել այն ճշմարտութիւններն , որ իւր մտաց կարողութենէ վեր են . որովհետեւ , ինչպէս արդէն յիշատակեցինք , յայտնեալ ճշմարտութեանց էութիւնն ըմբռնելու վրայ չէ ինդիբը , այլ անոնց պոյութիւնը ճանչնալու վրայ է , եւ յայտմասին դժուարութիւն մը չկայ . զարձեալ գերբնական յայտնութիւնը չիափաներ բանականութեան աղատութիւնն ալ , ինչպէս արդէն տեսանք , մանաւանդ թէ մեծապէս կը նպատակ անոր :

Չկայ վերջապէս արդեւք մը յայտնեալ ճշմարտութեանց կողմանէ , որոնք կամ կրնան ծանօթանալ մարդկանց մտաց՝ բնական լուսով , եւ այն ատեն արդեւք մը չկայ որ ուրիշ միջոցաւ կարենան ճանչցուիլ , եւ կամ ի վեր են քան զկար մտաց . եւ զարձեալ կրնայ զանոնք յայտնել մեզ Աստուած , նախ՝ որովհետեւ կան եւ պէտք է որ ըլլան այնպիսի ճշմարտութիւնք , եթէ չուզենք ճշմարտութեանց անհուն հորիզոնը մարդկային բանի կարողութեան սահմանին մէջ ներփակիլ . եւ երկրորդ՝ որովհետեւ անոնց մարդուս համար անըմբռնելի ըլլալըն ալ բանականութեան հակառակիլ ըսել չէ , նա՛ մանաւանդ՝ վասնզի ի վեր են քան զմիտս , չենք կարող ապացուցանել թէ ընդդէմ են բանականութեան . զորօրինակ Ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը անհասանելի է մարդկային մտաց եւ չէ ընդդէմ բանականութեան . յիրաւի չեմք գիտեր թէ ինչպէս կարելի է որ մի Աստուած՝ մի բնութիւն ըլլայ եւ երեք անձինք ըլլան , բայց կրնամք այսու հետեւցնել թէ անտեղի է . միթէ կը ճանչնամք յայտնապէս այս բնութիւնն եւ այս անձինքը : Ոչ .— ուրեմն երբ կ'ուզենք անոնց վրայ վճիռ տալ , կը յանդըդնինք վճռելու այն զոր չենք ըմբռներ :

Ի վախճանի կրնանք ամենայն իրաւամբք հաստատել թէ աս հասարակ բնական ճշմարտութիւններն մարդս կը ճանչնայ բանականութեան միջոցով , բայց գերբնականն ալ կարելի է , եւ եթէ Աստուած բարեհաճի սորվեցնել մեզի ճշմարտութիւն մը գերբնական եղանակաւ , խոնարհեցնելու եմք մեր միտքը ի նըպատակութիւն ամենազիտին Աստուծոյ , եւ ի պաշտօն հաւա-

տոց , և երախտագէտ զգացմամբ ընդունելու ենք Աստուծոյ պատգամները , որոց աղբիւրը ամենավճիտ ըլլալով՝ յստակ և քաղցրաշուր վտակի նման կրնան յատուի կեանս կարելի եղածին չափ յագեցնել մեր մտաց առ ճշմարիտն և մեր սրտին առ լաւն ունեցած ծարաւը և փափաքը :

Պէտրոս Վ . Գլխահեան

Ամոռսն ու շիշն Հոռովմայեցոց

(Հ Ռ Ո Վ Մ Ս Յ Ե Ց Ի Ո Ց Բ Ս Ր Բ Է Ն Կ Տ Ո Ր Մ Ը)

Հոռովմայեցիք երբեմն , ինչ որ այ ըլլային իրենց ընկերային հանգամանք , բռնադատուած էին միմիայն համաքաղաքացի սղջկանց հետ ամուսնանալու , վասնզի օրէնքն բացարձակապէս կ'արգիլէր օտար ընտանեաց հետ խնամութիւն հաստատելը , եւ կը տօնէին ամուսնութիւնները կրօնական արարողութեանց ամեն շքեղութեամբ՝ համոզուած ըլլալով քէ ճշմարիտ եւ կատարեալ երջանկութիւնն կախումն ունէր այդ խորհրդոսոր եւ միանգամայն հանդիսաւոր սովորութեանց ուղիղ եւ անքերի պահպանութենէն , զոր կտակած էին իւրեանց բարեմոյն նախնիք : Արդ կարելի՞ է , կը հարցնեմ , մեղադրել զանոնք իրենց այս որդիական յարգանաց համար :

Մի կողմ բողոյով կրօնից վերաբերեալ աւանդութիւնները , պիտի խօսինք փոքր ինչ բանի մի շահագրգիռ սովորութիւններու վրայ որ առ տակաւ տակաւ տարածուած են ուրիշ բազում երկիրներու մէջ , եւ որոց հետքն իսկ կը տեսնուին մինչեւ ցայսօր :

Մեծարոյ ընթերցողք , վայրկեան մը մտքերնիդ այդ յիշատակաց արժանի օրն տարէք : Առաստուղնէ ի վեր կ'սկսին հասանալութեամբ զբաղիլ եւ զոնել ի պատիւ երկնից եւ երկրի . երկուս աստուածութիւնք զորս կը նկատէին իբր առաջին

այր եւ կինն միացեալ մի սրբազան եւ անբակտեյի կապով . յետոյ ամուսնացեոց գլխին վրայ կը պտըտցնէին արօրի Ը-Ձ^(*) մը , ցուցնելու համար թէ ամուսնութիւնն ճշմարիտ լուծ մէ , երբեմն շատ ծանր , ինչպէս որ կ'ըստի , ինչպէս առն , նոյնպէս այ կնոջ համար :

Հարսն՝ իւր իսկ ձեռօք քաղած աղանիճի (***) ծաղիկներէ կապուած պսակ մը կը կրէ ի գլուխն եւ իրեն կը հետեւին խումբ մ'երիտասարդաց , ունելով ի ձեռին Հիմենի՝ հեքանոսական ժամանակի հարսանեաց նախագահող ջաստուածութեան ջաներն .

Ինչ կը նշանակէր արդեօք մանեյիքն եւ իլն գոր հարսին ետեւէն կը տանէին . — ո՛ն , աղոնք կը յիշեցնէին իրեն թէ պարտի մանեյ , տան մատակարարութեամբ զբաղիլ , փոխան ժամանակն պարապ տեղը անցընելու , ինչպէս որ թերեւս մինչ ցնարսնէսօտութեան ժամանակ ի գուր կ'անցնէր : Եւ ուրիշ զբարձայի եւ տարօրինակ մի բանն այ սա էր թէ փեսային դըրան վրայ եւս կը կապէին զայլի , խոզի կամ այլ ո՛ն եւ է կէնդանույ մը ճարպով թաթխուած եւ օծուած բուրդ , եւ այս , ըստ բարեմիտ կանանց , ջարաղիւթութիւններն վանելու համար էր : Հեքանոսութիւնն այսպէս դէռ հագարաւոր անյորդապաշտութիւններ ունէր :

Սակայն խնդիր այ է թէ արդեօք հիմակուան պէս օծիտ եւ ուրիշ ասոր նման ամուսնական պայմաններ կայի՞ն յայնժամ :

Այդ շատ հաւանական չէ , բայց հաճեցէք պահ մը դիտել Երկու ընտանիքները : Կիներն իրենց բազկաց վրայ կը վերցնեն զհարսն , որ կը մտնէ փեսին յարկը առանց սեւտը կուխելու , եւ որ կարծես կղզիի մէջ է , ազատելով հայրենի իշխանութենէն , բայց անկանելով ընդ բացարձակ տիրապետութեամբ : Եւ յայսմհետո՞ւ ուրիշ կանանց կը յանձնուին առաջնորդել հարսին յառագաստ փեսային , որ քիչ յետոյ ընկոյզներ կը բաժնէ ու կը սփռէ , ցուցնելու համար թէ ա՛յ հրաժեշտ կուտայ իսողերու եւ ամուրիական կեանքի սնտուեաց :

(*) Jux , որ եւ conjux (ընդ լծով , լծով միացեալ) բառ Լատիներէն , յորմէ Գաղղիերէն conjugal եւ bien conjugal բառն .

(**) Միւի տեւեյե , la verveine .

Բնա անյիշատակ սովորութեան՝ իւրաքանչիւր հարսնետորի
կողմէ նորապսակ ամուսիններուն ի պատիւ եղած բարեմաղ-
թութիւններն կը կազմեն հարսանեկան երգն , որով վերջ կը
տրուի հանդիսին :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆՃԵԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՐԴԻ ՆԻԹԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ (*)

(Շար այարութիւն եւ վերջ)

Ե.

Նիւթապաշտից տեսութիւնը քննեմք այժմ աշխարհածը-
նութեան եւ արդի աստեղարաչխութեան տեսակէտով :

Եօթնուտասներորդ դարու սկզբէն մինչև ցարդ ի լոյս ե-
կած աշխարհածնական դրութիւնք, նիւթակրօնից նիւթոյ նախ-
նական կազմակերպութեան նկատմամբ ունեցած ըմբռնունքէն
բոլորովին տարբեր ըմբռնանց վերայ հիմնուած են : Փոխանակ
այն անկարգ ընդհարմանց հիւլէից՝ որոցմով նիւթակրօնք տիե-
զերաց կազմակերպութիւնը մեկնել կը ճգնին , բոլոր աստեղա-
բաշխական դրութիւնք, — ի սկզբան անդ եղելոց, — իրական
կարգ մը , նիւթոյ կանոնաւոր եւ որոշեալ շարժմանց ամբող-
ջութիւն մը կ'ենթադրեն :

Քարթէզիոս , որ դառաջինն՝ դաշխարհ անսիրտիսելի օրի-
նօք ուղղեալ իբր մեքենական մի դրութիւն ըմբռնեց , կ'ընդու-
նէր թէ Սատուած՝ նիւթը ստեղծելուն պէս՝ այլ եւ այլ զան-
գուածներու բաժնեց , որոնց զանազան շարժումներ եւ փոփո-
խուի արագութիւններ սպաւորեց , եւ ամբողջ տիեզերաց տը-
ւած շարժման քանակութիւնը՝ իւր կամօքն՝ իրեն պահեց :

Նեւտոն՝ այս ճամբուն մէջ աւելի յառաջ երթալով , մոլո-

(*) Տե՛ս Պատկեր Ա. Տարէ , էջ 553 :

րակաց բողբոսածեւ շարժումը կը հրատարակէր , զոր սեղգակի Աստուծմէ յառաջ եկած կ'ենթադրէր :

Լաբլատ, իւր Մէկնութեան Գրքի մէջ հռչակեց իւր ամենաբարձր արտայայտութիւնն զիտութեան , Լաբլատ , կ'ըսեմք , կ'ենթադրէ թէ սկզբնականն նիւթն էր ի հրաշէկ վիճակի եւ օժտեալ ամենեւին թաւալական շարժմամբ կեդրոնական առանցքի մը շուրջը :

Վերջապէս , Պ. Փայ , իւր Յաղագս Ժափման աշխարհի յորջորջեալ նշանաւոր երկասիրութեանը մէջ , կ'ենթադրէ թէ նախնականն նիւթն մեծ կտորներով ցրուած էր , եւ իւրաքանչիւր կըտորներն արագաշարժ վոխայրութեանն եւ յամրաքայլ թաւալման շարժմամբն օժտեալ էին :

Գարձեալ լուսապատկերի (Spectroscope) երեւան հանած աստեղաց զոյնին եւ նոյնին կազմութեանց համաձայն եղած դասաւորութեան հետեւելով , այս երեւելի աստղաբաշխն ցուցուց թէ համօրէն աստեղաց ձեւանալը միեւնոյն տիեզերական (cosmique) ժամանակի կը պատկանի . եղբակացութիւն մը՝ որ բողբոսվին կը հակառակի նիւթապաշտից տեսութեան , ըստ որում կ'ըսեն թէ ժամանակաց անհուն շարքին մէջ ո՛ր եւ է ատեն մը աշխարհը կազմակերպեցան :

Ահա այսպէս , աշխարհածնական զրութիւնը՝ յորս արդի դիտութեան բովանդակ յառաջվիճութիւններն կը բովանդակուին , նիւթապաշտից սկզբանց բողբոսվին հակառակ սկզբունքներու վրայ կը հիմնուին : Ամենքն ալ բացայայտ կերպով կ'ընդունին թէ դերագոյն իմացականութիւն մը համակարգած է զնիւթ եւ օժտած է զայն շարժմամբք որք հարկաւոր են աշխարհի կազմակերպութեան մեքենագիտական մեկնութիւնը տալու համար :

Ուստի կրնայինք սպասել որ մեր հակառակորդք եւս ի մէջ բերեն աշխարհածնական տեսութիւն մը , որ լոկ իրենց բողբոսանց վրայ հիմնուած ըլլայ : Բայց որովհետեւ զեւ երկար ժամանակ պիտի սպասէինք անշուշտ , վասն որոյ զայս աշխատութիւն եւս մեք յանձն կ'աւնումք , եւ կ'ուզեմք հետազօտել թէ հիւլէից պատահմանց եւ բազկացութեանց նիւթապաշտական զրութիւնն վերջապէս ո՞ւր կը յանդի :

Ի զինն առնումք երկու հիւլէներ՝ որ հաւասար արագութեամբ ուղիղ գծի մը վրայէն իրարու դէմ ընթանան : Աոյն երկու հիւլէներ իրարու պիտի բախին , եւ առաձգութիւն չունե-

նայնուն համար՝ ընդհարումէն յետոյ անշարժ պիտի մնան : Ը-
սինք թէ այս հիւլէնէր առաձգութիւն չունին , վասնզի աստ
կը նկատեմք նախնական նիւթ մը , որ վինքը ոգեւորող շար-
ժումէն զատ յատկութիւն մը չունի : Եւ որովհետեւ ըստ վար-
դապետութեան նիւթակրօնից չիք զօրութիւն ըստ ինքեան , եւ
որովհետեւ սոյն այս զօրութիւնն՝ նիւթոյ ծանօթ կամ անծանօթ
շարժմունքէն եւեթ յառաջ կու գայ , վասն որոյ մեր նկատած
երկու հիւլէններն չունին ըստ ինքեան ո՛չ առանձին զօրութիւն ,
եւ ո՛չ ներքին շարժում , որ առաձգութիւնը կարենան մեկնել :
Ուրեմն , սոյն հիւլէններն ընդհարումէն յետոյ միաւորեալ եւ ան-
շարժ պիտի մնան :

Թո՛ղ երբորդ հիւլէ մը գայ եւ առաջին երկու հիւլէներով
կազմեալ զանգուածին բախի . յայնժամ այդ զանգուածն՝ ընդհա-
րող հիւլէի շարժումէն աւելի նուազ արագութեամբ մը շարժե-
լու պիտի սկսի , մինչեւ որ հակառակ կողմէն եկող մի այլ հիւ-
լէ վերածէ զայս արագութիւն ի գրոյ :

Այս պատճառարանութիւնը կրնամք անսահման կերպով շա-
րունակել . ո՛րչափ զանգուածն աւելնայ , այնչափ ընդհարմունք
իրարու կը յաջորդեն . բայց նոյն համեմատութեամբ կը նուազի
կեզրոնական զանգուածի արագութիւնն : Եւ երբ սոյն զան-
գուածն ըստ բաւականի մեծնայ , ընդհանրող մասնկաց թիւն ալ
չուտով կ'աճի . եւ որովհետեւ սոյն մասնիկներն ամեն կողմէ
հաւասար թուով պիտի գան , վասն որոյ հաւասարակշռութիւն
պիտի պոյսնայ , եւ ամբողջ զանգուածն անշարժ պիտի մնայ :

Սոյն այս երեւոյթն քանզի կրնայ միջավայրի ո՛ր եւ է մա-
սին մէջ տեղի ունենալ , կը հետեւի , ըստ տեսութեան նիւթա-
պաշտից , թէ տիեզերքն յօրինուած լինելու էր բազմաթիւ ան-
կախ զանգուածներէ , որք իրարու քով դրուած եւ անշարժ հիւ-
լէներէ պիտի կազմուին , եւ իրենց մակերեւութին վրայ շա-
րունակ բախող մասնիկներով պիտի աճին . եւ այս բախմանց
ներգործութեամբ նոցա շարժմունքն պիտի տկարանան մինչեւ
որ համարն ի գրոյ :

Հարկ չկայ ըսելու՝ թէ ամենափոքր վնասութիւն մը մեզ կը
ցուցնէ որ տիեզերքն ո՛չ իւր ամբողջութեամբը եւ ո՛չ իւր կազ-
միչ մասերովն չնմանիր ամենեւին ցարդ նկատեալ դրութեան :

Ի վեր անդր ըսինք թէ բովանդակ հիւլէից արագութիւնն
հաւասար է : Այլազգ ենթադրելն ալ կարելի չէ . քանզի հիւլէ-
ից ամենքն ալ իրարու նման լինելով եւ շարժումն , ըստ նոցա

տեսութեան, նիւթէն անբաժան ըլլալով՝ կը հեռուի որ արագութիւնը եւս հաւասար լինելու են ի մէջ հաւասար հիւլէից :

Սակայն եւ այնպէս ենթադրենք թէ հիւլէից արագութիւնն հաւասար չըլլայ : Նշանակենք w եւ w' միեւնոյն ուղիղ գծի վրայ հակառակ ուղղութեամբ շարժող երկու հիւլէից արագութիւնը . այդ երկու հիւլէիներ իրարու պիտի բախին, եւ արագութեան արտադրեալը պիտի լինի : $w' = \frac{w - w'}{2}$: Այս արագութիւն շատ քիչ բան պիտի ըլլայ անշուշտ , վասնզի ինչ որ ալ ըլլայ , հիւլէից արագութիւնն իրարմէ շատ քիչ տարբերելու են : Սոյն երկու հիւլէից միացմամբը կազմեալ զանգուածն պիտի յաւեւնայ եւ պիտի ստուարանայ այն մասնակամբք , որք պիտի հանդիպին որ եւ իցէ պատահակցութեան ներքեւ : Իսկ զարով արագութեան , որովհետեւ բախող մասնիկներն հաւասարապէս բազմաթիւ են ամեն կողմ ուղղուող արագութեանց նման , կը հեռուի որ՝ ատեն անցնելով արագութիւնը ծանրացնելու ճրգտող մասնկաց թիւը հաւասար պիտի լինի զայն աւելցնելու ճրգտող մասնկաց թուոյն , որով շարժումն կ'ըլլայ միօրինակ :

Եւ որովհետեւ սոյն այս երեւոյթն տիեզերաց ամեն կողմը տեղի պիտի ունենար , յայտնի է թէ միեւնոյն յատկանիշեր կըրող շատ մը զանգուածներ մեզ պիտի ներկայանան , բայց սոյն զանգուածներն՝ փոխանակ անշարժ լինելու , ո՛ր եւ է ուղղութեան մէջ զանազան արագութեամբք ոգեւորեալ պիտի ըլլան , այնպէս որ ժամանակ անցնելով անոնք , պատահմանց լոկ զի պուածոթիւ՝ միմիայն զանգուած մը պիտի յօրինեն , որ խիստ սրկար կամ բոլորովին ոչինչ շարժում մը պիտի ունենար :

Ահա այսպէս , տիեզերաց կազմակերպութեան նկատմամբ նիւթապաշտից յառաջ բերած հիւլէից պատահման ենթադրութիւնն կը յանդի բոլորովին հակառակ արդեանց քան զոր ունիմք առաջի աչաց : Փոխանակ զտիեզերս կազմող զանազան եւ անթիւ մարմնոց , որք ըստ մեծի մասին այլասեռ , ձեւով , ծաւալով եւ խտութեամբ տարբեր , եւ այլ եւ այլ միջավայրօք զատուած մասնիկներէ բաղադրեալ են , եւ որք կը կազմեն ամենափոքր խորշերէ սկսելով մինչեւ ամենամեծ դուռտերը՝ որք երկնից հաստատութեան մէջ կը շարժին , նիւթակրօնութիւնը մեզ կ'ընծայէ միակ, անչափ , անշարժ մի մարմին , համասեռ հիւլէիներէ բաղկացեալ մի զանգուած , եւ հարնական հիւլէից միացմամբ կազմեալ գնտածեւ մարմիններ , որք ո՛ր եւ է ուղղութեամբ խիստ սղար արագութիւն ունենալով կը ձգտին դէպ ի բացարձակ հանդիստ եւ անշարժութիւն :

Ուրեմն, նխթակրօնութիւնն՝ ըստ գիտութեան տեսակէտի,
սիսպ եւ մոյար վարդապետութիւն մի է :

2.

Իմաստասէրք ոմանք կը կարծեն թէ սոյն հետեւութիւննե-
րը ի դերեւ հանած կ'ըլլան ապաստանելով ի գաղափարն զքրո-
նիան՝ զոր նխթը կազմող մէն մի հիւլէից կը վերագրեն :

Սակայն աստ եւս գիտութիւնն կը փակէ զայս խուսա-
փական ճանապարհ՝ զօրութեան պարզ եւ ճշգրիտ սահմանը տա-
լով : Ի՞նչ է ուրեմն զօրութիւնն : Գիտութիւնն զայն կը սահ-
մանէ պարճաւ ինչ շարժման : Այսպէս Հոռոպ եւ այլք :

Հետեւաբար միշտ միեւնոյն երկուայրաբանութեան մէջ կը
յաժիւմք , Նիւթ եւ շարժում : Ի զո՛ւր մեր հակառակորդք զօրու-
թեան զիտական գաղափարին կ'ապաւինին այս լարիւրինթոսէն
եղանելու համար : Գիտութիւնն իրենց կը պատասխանէ թէ զօ-
րութեան էութիւնը ճանչնալը իրեն չվերաբերիր , եւ թէ զօ-
րութիւնը շարժման պառճառն է , — այսու վերստին կ'ապացու-
ցուի որ ամեն շարժում ունի մի պատճառ , — եւ թէ զօրութիւ-
նը ուսումնասիրելով միմիայն շարժումը կ'ուսումնասիրէ :

Ուստի , գիտնոց համօրէն դասը , — ի մասնաւորի նխթա-
պաշտ գիտուններն՝ զորս հերքել միայն կը զիտեմք աստ — ,
կ'ընդունին թէ տիեզերաց մէջ եղող բովանդակ զօրութիւնք լոկ
առերեւոյթ բաներ են եւ նխթոյ տեսանելի կամ աներեւոյթ
շարժումներէն յառաջ կու գան : « Զօրութիւնք , ըստ Պիւքնէրի ,
ոչ այլ ինչ են եթէ ոչ նխթոյ շարժմանց այլ եւ այլ տեսակներ » :

« Ինչ որ զքրոնիան կ'անուանեմք , կ'ըսէ Սէն—Հոսթերտ ,
« բնութեան մէջ չկայ , զօրութիւնն՝ շարժման փոխանցութեան
« մը պարզ արդիւնքն է : Գիտութեան արդի վիճակին մէջ , հա-
սած եմք տակաւ ճակատել ի բնութեան բայց եթէ նխթ եւ
« շարժում , որոց երկուքն ալ հաւասարապէս անեղծանելի են » :

Աստի կը հետեւի թէ , — որովհետեւ զօրութիւնն իբր
պատճառ կամ իրական գոյացութիւն չկայ ի բնութեան , — ան-
հնարին է զօրութիւն ընծայել նախնական հիւլէից՝ որոց նխթա-
կրօնութիւնն կը վերածէ ամեն բնական կամ բնախօսական ե-
րեւոյթները . հետեւաբար մեր ցարդ հանած եղբակացութիւն-
ներն ամբողջովին կը մնան անհերքելի :

Իսկ եթէ , արդի գիտութեան ամենապճուական հաստատու-

Թեանց հակառակ , մեր հակառակորդը կամին ընդունել թէ հիւ-
լէն ունի ըստ ինքեան սեփական եւ կից զօրութիւն մը , եւ
սակայն յատկապէս զսա եւ որիչ ի նիւթոյ , զիտեղ կու տամք
նոցա թէ իւրեանց մէն մի հիւլէները հոգեղէն էակներ կ'ընեն ,
այնպէս որ ինչ որ մարդուն , ինչ որ Աստուծոյ կը զլանան ,
զայն առանց փոքր իսկ պատճառի նիւթայ կ'ընծայեն . մէն մի
հիւլէն՝ ամբողջ էակ մը կ'ընեն , նիւթական եւ աննիւթական
միանդամայն , յաւիտենական , հարկաւոր էակ մը կը կացու-
ցանեն , եւ մի միայն հարկաւոր էակը չճանչնալու համար՝ մի-
լիտաւորներ կը ստեղծեն : Եւ որ աւելին է , սոցն այս հիւլէ-
լոց իւրաքանչիւրին՝ ձգողութեամբ կամ վաճառողութեամբ , այս է՝
սիրով կամ ատելութեամբ գործելու կարողութիւնը ընծայելով
այնպիսի սնուր եւ անիմանալի կարողութիւն մի կու տան , զոր
մարդս եւ ոչ իսկ մարդկային միտքն չունի , եւ որ կը նմանի
ըսելու թէ՛ Նա Ներկայ է անոր ուր ոչ է :

Մի այսպիսի ըմբոստուց բոլորովին գիտութեան հակառակ
է , եւ գիտութիւնն չէ կարող զայս ընդունել առանց կործանե-
լու իսկոյն այն ամեն օրէնքները , այն ամեն սկզբունքները , ու-
րոնց վերայ կը հիմնէ իւր պատճառաբանութիւնները եւ իւր հա-
շիւները . զի հիւլէն կը լինի յայնժամ բանական էակ մը , եւ ոչ
թէ անգործ եւ կրաւորական մի էակ , ինչպէս արդի գիտու-
թիւնն զայն կ'ըմբռնէ :

Այսու հանդերձ , ընդունինք պահ մը թէ նիւթն՝ ի հեռա-
տանէ ներգործելու կարողութիւնն ունենայ յինքեան , եւ են-
թադրենք թէ մէն մի հիւլէ՝ համեմատաբար զանգուածոց՝ ձը-
ղողութեան կարողութեամբ օժտեալ ըլլայ , եւ այս ձղողութիւ-
նը նուազի նոյն զանգուածոց հեռաւորութեանց չորեքկուսի
արմատոյն համեմատութեամբ : Բայց զիւրին է ցուցանել թէ՛
առանց նիւթէն դուրս աւնուած պատճառի մը միջամտութեան ,
այդ կարողութիւնն բանի մը չճառայիր : Այս մեր ըսածն կը
հիմնուի սա հետեւեալ մեքենագիտական հայեցողութեան (thé-
orème) վրայ :

« Համասեռ գունտի մը՝ նոյն գունտին ներսը զետեղուած
« կէտի մը վրայ ըրած ձղողութեանց դուրսարը՝ նոյնօրէն ոչինչ է » :

Այս հայեցողութիւն՝ գունտի ճառագայթէն անկախ լինելով
անհուն ճառագայթ ունեցող զիսուածին կը յարմարի , ուստի
կը յարմարի նաեւ այն նիւթոյն՝ որ ի սկզբան սնուց եղելոց
ցրուեալ եւ սփռեալ էր ի միջավայրի :

Բայց սոյն ապացուցումն կ'ենթադրէ թէ հիւլէներն անշարժ եւ ի հանգստեան լինելով՝ լոկ իրենց ձգողութեամբն կը ներգործեն : Այժմ քննենք այդ գիպուածը՝ յորում այդ հիւլէներն ո՛ր եւ է արագութեամբ ի զանազան ուղղութիւնս ոգեւորեալ լինին եւ ըստ նոյն օրինաց զիրար քաշեն :

Նկատենք իրարու մօտ երկու մասնիկներ՝ որոնք նախնական զանգուածէն առնուած ըլլան , եւ ի ժամու անդ՝ յորում նոցա շաւիղքը (trajectoires) զիրար այնպէս մը մերձեցնեն՝ որ զիրար անջատող միջոցը այլ անջատիչ մասնկաց նկատմամբ խիստ քիչ քան ըլլայ : Թէեւ մնացեալ զանգուածն՝ սոյն մասնըրկաց վերայ կը ներգործէ ձգողութեամբ , այլ սոյն այս ձգութիւնն զամ քան զգամ տհարանալով եւ ի մի եւ նոյն վերածուելով , նոցա առնչական չարժու մը չեղանակաւորեր կրէք : Ուստի մասնկաց իրարու վերայ ունեցած փոփոխակի ձգողական արդիւնքն՝ զանոնք կոր շաւղէն բնթացքնելը պիտի լինի . որով նորա հաւասար արագութեամբ միմեանց վերայ պիտի իջան . եւ այս անկումն յառաջ եկած բաղխումն՝ անոնց երկուքն ալ յանշարժութիւն պիտի վերածէ :

Յայնժամ կ'ունենամք փոքր մի զանգուած , մի կեդրոն՝ որ շուտ կ'աճի ի ձեռն մերձակայ մասնկաց , զի սոքա ամեն կողմէն հաւասար քանակութեամբ հասնելով , այսպէս կազմեալ կեդրոնը յանշարժութեան կը պահեն եւ կամ իրեն խիստ տկար թրթռական շարժում մը կը թողուն : Եւ որովհետեւ սոյն երեւոյթն միջնալայրի ո՛ր եւ է կիտին վերայ տեղի կ'ունենայ , ապա իրարու քով եկած հիւլէներէ բաղկացեալ խիստ շատ համառու զանգուածներ կ'ունենամք : Եթէ այդ զանգուածներն միմեանց հաւասար են եւ հաւասար հեռաւորութեամբ իրարմէ անջատեալ , կրնամք զանոնք իբր համասու գնտածեւ խաւեր նշկատել , եւ յայնժամ նոցա փոփոխակի ձգողութեանց արդիւնքն է գրովանդակ զանգուածն թողուլ ի հանգստեան : Ապա թէ ոչ , այս ձգողութիւնք՝ մեր նկատած գուհտերու մէջ այնպիսի կիճոտ շարժումներ յառաջ կը բերեն , որ ամբողջական հաշիւն (calcul intégral) անկարող է զանոնք վերլուծել . այսու հանդերձ , արեւելեաց մէջ մեր սաւալի աչաց ունեցածին նոքա ամենեւեւն չեն նմանիր : Բայ աստի , տակաւին չկուտակեալ մասնկաց ցուցած ընդլիմութեան պատճառաւ , սոյն շարժումներն կը սկսին շուտ մը գանդաղիլ , եւ զունտերն տակաւ իրարու մօտենալով վերջապէս կ'իջան միմեանց վերայ : Եւ այսպէս , արեւելեաց համայն քովէ

քով զբուսած հիւլէներէն բազկացեալ լոկ համասեռ մի զանգուած
կը կազմեն : Կրնամք նաեւ տալ սա ընդհանուր սկզբունքը :

Ինչ որ ալ լինի վիճակն՝ զոր սկզբնական նիւթոյ ընծայել
ուզին , ինչ որ ալ լինին զօրութիւնքն՝ որովք զայն օժտել ճըզ-
նին , քանի որ համօրէն հիւլէներ ունին հաւասարաբար մի եւ
նոյն յատկութիւնները , եւ միեւնոյն ձգողական զօրութեամբք
օժտեալ են , սա միայն կրնայ հետեւիլ թէ՛ յետ ժամանակաց ,
տեւական հաւասարակշիռ վիճակի մը կը յանդուի , եւ նիւթոյ
ցրուածութիւնն կը վերածուի վերջապէս ի մի կամ ի բազում
զանգուածս հիւլէից մշտնջենապէս միացելոց , որոց վերջնական
վիճակն կը լինի միաձեւ շարժում , կամ բացարձակ անշարժու-
թիւն ու հանդիստ :

Հետեւաբար , յայտնի է թէ , եթէ նիւթակրօնից ըսածին
պէս՝ նիւթն յաւիտենական ըլլար , եթէ ի հարկէ ինքն իրեն
ի յաւիտենից նիւթն էր ի գոյութեան , վերոյիշեալ վիճակն լսկ
ի յաւիտենից տեղի ունեցած լինելու էր , զի յիշեալ ձեւակեր-
պութեանց կատարուիլ կարենալուն համար սղահանջեալ ժամա-
նակն որչափ եւ շատ ենթադրուի , անհունի , յաւիտենականի
նկատմամբ ոչինչ է :

Նկատենք ի մասնաւորի առաձգական զօրութիւնը՝ որուն
վերածել կ'ուզեն նիւթական աշխարհի զայլ ամենայն ծանօթ եւ
անծանօթ զօրութիւնները :

Գիտեմք թէ ըստ մեքենադիտական տեսութեան ընդհար-
ման , իրարու հանդիպող երկու առաձգական մասնիկներ , լոկ
զիւրեանց արագութիւնը կը փոխանակեն : Եթէ անոնցմէ մին
լինի յանշարժ վիճակի , եւ մի այլ շարժուն մասնիկ զայ ասոր
բաղխի , նա կը զազրի շարժելէն , եւ սա անոր հաղորդած
շարժման զօրութեամբ՝ շարժումը կը շարունակէ : Եւ եթէ եր-
կու մասնիկներն հաւասար եւ հակառակ արագութեամբ լինին
ի շարժման , մի եւ նոյն արագութեամբ եւ հակառակ ուղղու-
թեամբ զիւրեանց շարժումը կը շարունակեն : Որով տիեզերաց
կառմիչ հիւլէից մէջ բազկացութիւն մը երբէք տեղի պիտի չու-
նենայ , եւ տիեզերքն անջատեալ սրբղ մասնիկաց մշտնջենական
վիճակին մէջ պիտի գտնուի , այնպէս որ նոյն մասնիկներն կա-
նոնաւոր շարժում մը , ամբողջութիւն մը երբէք պիտի չունե-
նան :

Ահա այսպէս , եղևոց սկզբնաւորութեան ինդիքը ինչ կեր-
պով որ մտածուի , թէ՛ սրբղ նիւթակրօնից հետ նիւթէն եւ

չարժուճէն զատ ուրիշ կազմիչ տարր ընդունիլ չուզուի, թէ՛ նիւթապաշտ համաստուածեան աղանդոյն հետ— որ արդի համաստուածութեան միակ ձևն է, — նիւթոյն ընծայուի ինչ ինչ սեպհական զօրութիւն եւ անբաժան ի հիւլէէ, կ'ունենամք միշտ մի այնպիսի վիճակ տիեզերաց՝ որ էականապէս եւ բոլորովին կը տարբերի մեր տեսած տիեզերքէն: Հետեւաբար՝ նիւթապաշտից վարդապետութիւնք՝ որ գիտութեան յառաջընթացութեամբը այնչափ բարձրաձայն կը պարծին, մի եւ նոյն գիտութեան հետ յայտնի հակասութեան մէջ են, ոչ թէ միայն իւրեանց սկզբունքներով, այլ նաեւ անոնցմէ կլամ բովանդակ հետեւութիւններով:

Ապա ուրեմն նիւթակրօնից վարդապետութիւնքը գիտութեան տեսակէտով եւս մոլար են, եւ ոչ ոք յողջամտաց կրնայ զանոնք իրաւամբ սրտազանկ:

Յով. Վ. Բուլիւն

ԿԱՐԴԻՆԱԼ ՄԱՆԻՆԿ

ԵՒ

ԱՆԳՂԻՈՅ ԱԶԱՏԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՆ

Անգղիական մամուլն համօրէն, նոյն իսկ ազատական եւ բողոքական կ'ողջունէր արդ իսկ համակրելի խօսքերով եւ սկնածութեամբ Մաննինկ կարդիւնալի յոբէյեանին հանդէսը, որ ինչպէս ծանօթ է, բողոքականութենէ դարձած է. Օքսֆորտի համալսարանին մէջ Կլատսթոնի դասակից է. մրցող եղած է: Այս՝ Եկեղեցւոյ հոյակապ իշխանին նկատմամբ, անգղիական կարծեաց մի ժողովրդային քուէարկութիւնն էր:

Երեսուն տարի յառաջ, սչ ոք կը խորհէր քե՛ն. ուայզման կարդիւնալի յաջորդն Անգղիացոց սրտին մէջ մի այսպիսի նշանաւոր տեղ պիտի գրաւէր երբէք: «Երէգիսարհիբալ բայր!

պիք (Ecclesiastical Titles Bill) հետ ունեցած դատն հակաճան-
ուսութեան ժամանակ , Ռայզման կարդինալի պատկերն այրած
էին Ֆլիթ սթրիթ (Fleet street) հրապարակին մէջ , եւ դեռ
վերջը , այս քաջահմուտ եւ երեսնի եկեղեցականը Լիվրբուլի
փողոցներուն մէջ բարի բռնած էին : Իսկ « այժմ, կ'ըսէ Տէյլէ
Քրօնթըլ , Մաննինկ կարդինալին եղած բշխմանը մը ի խոր
կը խոցէ ամենուրեք ուր անգղիէրեն կը խօսուի » : Բողոքա-
կան լրագիրն իրատունք ունի : Անգղիոյ Կարողիկէ Եկեղեցւոյն
նախագահն , իւր նախորդին պէս, ծննդեամբ երեսնի Անգղիա-
ցի մի է . բայց անորմէ աւելի բարեբախտ գտնուելով , իւր
առջեւ բացուած փառաւոր ասպարեզին փափուկ պահանջ-
մանց ինք զինք յարմարեալ մէջ կատարելապէս յաջողեցաւ :
Յամենայն ժամանակի Կարողիկէ Եկեղեցին ունեցաւ ի ծոցի
իւրում բարձրաստիճան անձնաւորութիւններ , որք իւրեանց
առաքելական առաքինութեամբքն եւ քաջահմուտ գիտութեամբն
նորա հաստոց , խորհուրդներուն եւ ծեսերուն վրայ մեծ փայլ
մը աւելցուցին : Արդ՝ ամենայն ճշմարտութեամբ կրնանք ը-
սել թէ , Եկեղեցւոյ այսքան ընտրեալ իշխանաց փառանգն՝
Մաննինկ կարդինալի չափ ժողովրդականութիւն չէ ունեցած :
Իրմէ գատ , ոչ որ թերեւս , յաւ ջեր յաջողեր բնաջինջ ընելու
հակապայապահ սաստկաշունջ հողմը , որ Անգղիոյ մէջ Հռովմայ
գահուն դէմ այնչափ բշխմութիւն յարոյց , երբ բարեյիշատակ
Պիոս Թ. Քահանայապետը Անգղիոյ մէջ նուիրապետութիւնը
հաստատեց , զոր յայնժամ Տիարայիկ« սուտ եկեղեցական նուիր-
ապետութիւն պատկական յԱնգղիա » կ'անուաներ :


Ինչպէս կ'ըսէ դարձեալ նոյն բողոքական եւ արմատական
թերթն , անգղիական եկեղեցւոյ պատմութիւնն անոր հետ բաղ-
դատելու անձնաւորութիւն մի չկրնար ներկայացնել . իրաւ է
որ Մաննինկ կարդինալ շունի հոգեւոց վրայ այն հոգեւորական
իշխանութիւնը՝ զոր կարդինալ Նիւմանի խորին հանձարն կ'ազ-
դեր իւր մեծ առաւելութեամբ : Ռեսքմինիսթրի Արքեպիսկո-
պոսին ջատագովութիւնն տպեալ գրքեր չէն . բայց Լոնտոնի
հագարաւոր անշուք բնակարանաց մէջ խորարմատ գետեղու-
ած է այն , նորա ամոքած բշխաութեանց քաղցր յիշատակ-
ներով : Հանրային կարծեաց մէջ նորա վայելած երեսնի վար-
կին՝ վկայ է Լոնտոնի մէջ տեղի ունեցած հոգակաւոր գործա-
դադարն , որ շնորհիւ կարդինալին բարեյաջող էր մը ունե-
ցաւ :

Երբ Անգղիացոց հարցուի թէ մեր օրերու ամենամեծ Էկեղեցականն ո՞րն է, հնգին չորսը առանց վարանելու կը պատասխանեն թէ « Մաննինկ կարդինալն է » : Այսպէս կը գրէ յիշեալ բողոքական լրագիրը : Եւ նոյն իսկ պաշտօնական—բողոքականաց դատուն մեջ Նորին Վսեմութիւնն կրցաւ իրեն յանկուցանել յառաջագահութեան պատիւը : Թեեւ իրեն տրուած կարդինալութեան պատուոյն մինչեւ 1884 յուելեայն հասնեալ էր Անգղիա, սակայն կառավարութեան կողմանէ պաշտօնապէս ճանչցուած չէր : Աղքատաց բնակարաններու բարւոքման համար կարգուած արքայական յանձնաժողովոյ Արքեպիսկոպոսին անդամ ընտրուիլն բերաւ խնդիրը նախարարաց ժողովոյն առջեւ : Պ. կատարուն՝ խնդրոյն վերաբերեալ ամեն կէտերը ուշի ուշով քննեց, եւ յորտ Սալսպուրիի կատարեալ հասանութեամբ յանձնարարեց քաղուհւոյն որ կարդինալի անունը Կապեաի իշխանին անունէն անմիջապէս ետքը դասեալնայէս որ Մաննինկ արքեպիսկոպոսն արդի առաջին նախարարէն յառաջ կը բազմի :

Այս ամենայն բար է ցուցնելու թէ կարողիկէ նուիրապետութիւնը ի՛նչ մեծ յարգ է վարկ կը վայելէ Անգղիական հողոյն վրայ, բողոքական տէրութեան մը մեջ :

Յ. Վ. Բ.





ՊԱՏԿԵՐ տասն է հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դահեկան
Գաւառաց եւ օտար երկիրներու համար
քղրատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

Իշխարանցիւր թիւ 2 դասեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եւչիլ փողոց,
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան եւ թերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU BADGUERE

Constantinople, Péra, rue YÉCHIL N^o 1

معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولتمشدر